ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2021/48

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2021 թ. N 48

ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշեվի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Գավառ, Ազատության փող., 38 շենք

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 24.12.20թ.-ի Հանձնաժողովի նիստում քննարկեց Գավառի պետակա գյուղատնտեսական քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	28 փետրվարի 2018թ.
ինքնավերլուծության ներկայացում	2 հուլիսի 2018 թ.
փորձագիտական այցի իրականացում	16-18 հունվարի 2020թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	24 հունվարի 2020 թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	28 փետրվարի 2020 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորվման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ առկա են:***

ՄԿԾ-ները համահունչ են հաստատության առաքելությանը, իրականացվում են պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, քոլեջում կա մշակված ուսանողների գնահատման քաղաքականությունը, գործում են ՄԿԾ իրականացման արդյունավետության գնահատման որոշ մեխանիզմներ:

Ուսումնական պլաններում գերակշռում են տեսական դասընթացները: Գիտելիքի, հմտությունների և կարողությունների ձևավորմանը միտված դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և արդյունավետության, ինչպես նաև այլ կրթական գործընթացների արդյունավետությունը համակողմանի չի ուսումնասիրվում:

ԳՊԳՔ-ն չունի բենչմարքինիգի իրականացման հստակ մշակված քաղաքականություն և հուսալի գործիքակազմով մեթոդաբանություն, սակայն այս ուղղությամբ իրականացվել են որոշակի քայլեր:

Քոլեջում կարևորում են ՄԿԾ-ների մշտադիտարկման գործընթացի անհրաժեշտությունը, սակայն դեռևս կանոնակարգված գործընթաց տեղի չի ունենում:

Թեև քոլեջն ապահովված է անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով՝ կրթական ու այլ նպատակների իրականացման համար, սակայն, դեռևս խնդիր է ՊԴ կազմի փորձառու մասնագետների համալրումը: Առկա է դասախոսական կազմի երիտասարդացման և կայունության ապահովման խնդիր, որի ուղղությամբ քոլեջն ակտիվ աշխատանքներ է տանում:

ՄԿԾ-ների իրականացման համար քոլեջն ապահովված է բավարար շենքային պայմաններով: Քոլեջում գործող կամ նախկինում իրականացված դրամաշնորհային ծրագրերի և տարածաշրջանանի գործատուների շնորհիվ քոլեջը համալրվել է կրթական միջավայրի ձևավորման

համար անհրաժեշտ ենթակառուցվածքային և նյութատեխնիկական բազայով, լաբորատորիաներով, որոշակիորեն համալրվել են նյութական ռեսուրսները: Այնուամենայնիվ, ՄԿԾ-ների իրականացման համար գրադարանում առկա մասնագիտական գրականությունը և ուսումնամեթոդական ձեռնարկները սակավ են:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ՄՈՒՀ-ն ունի ձևակերպված և ՈԱԾ-ին համահունչ առաքելություն, քոլեջի նպատակներն ու խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Քոլեջի կառավարման կարգն սահմանված է կանոնադրությամբ և իրականացվում է կոլեգիալ և միանձնյա կառավարման սկզբունքների զուգակցման հիման վրա: Քոլեջում կրթական և այլ նպատակների իրականացման համար առկա են անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, սակայն դրանցից բավարվածության վերլուծություններ չկան, ինչպես նաև բացակայում են վերլուծությունները կառավարման համակարգի արդյունավետության գնահատման վերաբերյալ: Դասախոսները և ուսանողները մասնակցում են իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Քոլեջն իրականացնում է երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորում: Երկարաժամկետ պլանավորումը Ռազմավարական ծրագրի ժամանակացույցն է, իսկ կարճաժամկետ պլանավորումը՝ ընթացիկ ուսումնական գործընթացի տարեկան պլանավորումը, ներկայացվում է ուսումնական հարցերի ժամանակացույցերի տեսքով: Միջնաժամկետ պլանավորում դեռևս չի իրականացվում:

Թեև 2017թ-ից քոլեջում գործում է ՈՆԱ ստորաբաժանում, սակայն համակարգը դեռևս ներդրման փուլում է: Առկա է որակի ապահովման քաղաքականություն, սակայն այն չունի հստակ ընթացակարգեր, դրա իրագործման համար անհրաժեշտ մեխանիզմներ և գործիքներ, տրամադրված չեն մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, ներքին և արտաքին շահակիցները իրազեկված չեն որակի ապահովման գործընթացների վերաբերյալ:

ՈԱ ՊԻՍԲ շրջափուլը քոլեջի գործունեության մեջ չի իրականացվում: Կառավարման գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլում: Գնահատման և բարելավման մեխանիզմներ առկա չեն:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

Քոլեջը չունի հետազոտության/ստեղծագործական ոլորտում իր հավակնություններն ու հետաքրքրություններն արտահայտող քաղաքականություն, որը կհամապատասխաներ ՈԱԾ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչներին:

Քոլեջում որպես հետազոտական/ստեղծագործական գործունեության և կրթական գործընթացի փոխկապակցվածության հիմնական մեխանիզմ դիտարկվում են ռեֆերատներն ու կուրսային աշխատանքները, որոնք թույլ են և չեն ապահովում հետազոտության գիտակարգային շրջանակները:

Քոլեջն ունի և ապահովում է հաշվետվողականությունը սահմանված կարգի միջոցով, քայլեր է ձեռնարկում իր գործընթացների թափանցիկության և հասարակությանը առավել հասանելի լինելու ուղղությամբ:

Քոլեջում արտաքին կապերի ուղղությամբ բավականին աշխատանքներ են տարվում՝ համագործակցություն նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ, ոլորտի գործատուների հետ: Սակայն, այդ աշխատանքները դեռևս սկզբնական փուլում են և այս բնագավառում ակնկալվում է անելիքների հստակ պլանավորում:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագրի մեծ մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Բարելավման ծրագիրում ներկայացված են հստակ քայլերն ու ակնկալվող արդյունքները:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշեվի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   - երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ փոխկապակցված պլանավորման անհրաժեշտությունը,
   - իրականացվող գործընթացների մշտադիտարկման մեխանիզմների, արդյունքների և առաջընթացի գնահատման քանակական և որակական չափելի առանցքային ցուցիչներ ունենալու պահանջը,
   - հետազոտական/ստեղծագործական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործուն մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը,
   - ռազմավարական խնդիրներին առավել համադրելի գործընկերային կապերի ապահովմանը,
   - որակի ներքին ապահովման քաղաքականության ու նպատակների վերանայմանը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել՝**
   - քոլեջի առաքելության և ռազմավարական նպատակների հստակեցմանը,
   - հետազոտական/ստեղծագործական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման գործիքների մշակմանը և կիրառմանը,
   - արտաքին կապերի զարգացմանը և գործատուների հետ համատեղ ռազմավարության մշակմանն ու իրագործմանը,
   - որակի ապահովման մեխանիզմների ու գործիքակազմի լրամշակմանը,
   - քոլեջի բոլոր գործընթացներում և կառավարման մակարդակներում ՈԱ ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,

- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
- գործնական պարապմունքների և պրակտիկաների ժամաքանակի ավելացման անհրաժեշտությանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշեվի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2021 թ., մայիսի17
ք.Երևան